

ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՍՏԾՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է.

(Ազատ փոխադրութիւն Մանէէգացայից).

Թեպէտ իր մտքի թափով, յոյզերով ու զգացմունքներով մարդն արարածներից ամենից բարձրն ու բաղդաւորն է, բայց նրա այդ բաղդաւորութիւնը դեռ ամբողջացած ու կատարեալ չէ, որովհետեւ նա դեռ բազմաթիւ պատահարներով ու փորձութիւններով է շրջապատուած, որովհետեւ նրա համար դեռ շատ բան անբացատրելի ու անհասկանալի է մնացել: Այդպիսի բաղդաւորութեան հասնելու համար նա դեռ շատ պիտի կրթւի, մօտենայ բնութեանն ու նրա հընդ սպասաւորը դառնայ: Բնութիւնից ու նրա օրէնքներից դուրս փրկութիւն ու բաղդ որոնելն աւելի քան անմտութիւն է, որովհետեւ այդ օրէնքները մեծ իմաստութեամբ ու ամենայն ճշտութեամբ են համակարգւած: Խախտել դրանցից թէկուզ ամենափոքրիկն—առանց խիստ պատժւելու՝ անկարելի է: Մարդը պիտի սրբութեամբ պահպանի այդ կանոնները, եթէ չէ ուղուժ խստօրէն պատժւել:

Բնութեան մեծագոյն կանոններից մինն էլ աշխատանքն է, որ կեանքի ամենաթանկագին բարիքը, նրա գերագոյն բաւականութիւնն է: Կեանքը հէնց ինքն աշխատանքն է. մինը միտքն է, միւսը նրա արտայայտութիւնը: Դժգոհել աշխատանքից, փախուստ տալ, հրաժարւել նրանից, նշանակում է հրաժարւել կեանքից: Նա Աստծու անէծքը չէ, այլ նրա գերագոյն օրհնութիւնը, որից մարդու գոյութեան իմաստն ու նպատակն է բղխում: Ի՞նչ կը լինէր մեր կեանքն առանց աշխատանքի, եթէ ոչ մի չափազանց ձանձրալի, միօրինակ ու անմիտ ժամանց, որ շատ շուտ կը յոգնեցնէր մեզ: Աչքի անցրէք վերջերս այնքան յաճախ ու ամենուրեք կրկնւող ինքնասպանութիւնների պատճառները և դուք կը գտք այն միակ եզրակացութեան, թէ այդ յանցանքը զլուխ է բարձրացնում ու զարդանում աւելի շուտ այն-

տեղ, որտեղ թուլանում ու սպառւում են աշխատելու կորույն ու եռանդը:

Աշխատանքի ամենազեղեցիկ օրինակն ինքը բնու թիւնն է մեզ տալիս: Նա մի մեծ, հսկայական արհեստանոց է, ուր ոչ մի հիւլէ, ոչ մի մասնիկ, ատոմ անգործ չէ, ուր մի Անտեսանելի և Իմաստուն Ոյժի կտրդադրութեամբ աշխատում են և՛ օդ, և՛ արեւ, և՛ բոյսեր ու միջատներ, և՛ լոյս ու ջերմութիւն:

Օդն անընդհատ, անդադրում կազմալուծում, քայքայում ու շինում է, նա նոյն իսկ քարի խորքն է թափանցում ու աւերում նրան: Արեւն առանց յոգնելու կեանքի է քաշում ամենքին, գոյն է տալիս միջատին ու բոյսին, համ ու հիւթ է տալիս պտղին ու ծաղկին, ջերմացնում, կենդանացնում է սառած երկիրը, գործի է դնում դոլորշին ու ամպը, և զուր չէր, որ հին աշխարհը նրան առտուածացնում էր: Բոյսը զուգում, զարգարում է, մեր երկիրը, կլանում, ոչնչացնում է մեզ համար այնքան փաստաւոր անխաթխւած, խնդում է սեր հոգուն ու սրտին: Թռչունն ու միջատ՝ իրենց հերթին, շարժման ու աշխատանքին աննման օրինակներ են: Նրանցից մինը փորում, երկրորդը կրում, երրորդը ժողովում է, մինը հիւսն է, մի ուրիշը պահապան կամ դերեզմանահատ: Դաշտ դուրս եկէք, շարժեցէք իւրաքանչիւր ձեզ, խոտ, քար ու ծաղիկ, ամեն տեղ դուք շարժում, աշխատանք կը տեսնէք, ամեն տեղ դուք կը լսէք՝

Մարդ, աշխատիր, աշխատութեան մէջ է բաղդն ու երջանկութիւնը: Եւ մարդն աշխատում է: Նա կանգնած այդ մեծ արհեստանոցի զլխին անդադար աշխատում, ստեղծագործում է: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել. նա պիտի աշխատի, որ կարողանայ կերակրուել, ապրել, հասարակական պարտք կատարել:

Աշխատանքն առողջութեան գլխաւոր պայմանն է: Ով ուզում է ֆիզիքապէս ու հոգեպէս առողջ լինել, նա պիտի աշխատի: Աշխատանքն ամրացնում է թոյլ կազմաւածքը: Զուր չէ, որ նորագոյն բժշկութիւնը շատ անգամ իր հի-

ւանդներին դեղի փոխարէն աշխատանքի այս կամ այն ձևն է առաջարկում: Աչքի անցնելով մեծ մարդկանց կեանքը, մենք այնպիսիների ենք պատահում, որոնք — չնայելով իրենց ի բնէ թոյլ կազմուածքին, աշխատանքի շնորհիւ 80—100 տարի են ապրել: Հռչակաւոր Վօլտէրը նոր ծնած ժամանակն այնքան թոյլ ու վտիտ էր, որ ոչ ոք չէր հաւատում, թէ նա կապրի: Այդպէս թուլակազմ էլ մնաց նա իր ամբողջ կեանքում. սակայն պատկառելի տարիքի հասաւ, որովհետեւ երբեք աշխատանքը չը թողեց: Եթէ կարգալուց յոգնում էր, գրիչ էր ձեռք առնում. գրիչն էր ձանձրացնում, անմիջապէս պարտէզ ու արհեստանոց էր փազում, այգեպան կամ ճարտարապետ էր դառնում: Այսպէս աշխատող մարդն ապրեց 84 տարի:

Գերմանիայի փառքը կազմող աշխարհահռչակ փիլիսոփայ Կանտը, որ երբեք աշխատելուց ձեռք չէր քաշում, համարեա մի ամբողջ դար ապրեց: Իսկ մեր օրերի մեծ բարոյագէտ Լ. Տօլստօյը, Վասպուրականի արծիւ հայոց հայրիկը, որոնք պատկառելի ծերութեան հասան, միթէ աշխատանքի գեղեցիկ օրինակներ չեն: Գնացէք գիւղերը, մտէք խղճուկ, աղքատիկ խրճիթները. ձեզ շատ անգամ կը դիմաւորեն 80—100 տարեկան կայտառ ու ժիր ծերունիներ. ովքե՞ր են դոքա, եթէ ոչ գիւղական օրհնած աշխատանքի ընտիր ներկայացուցիչներ: Դրա հակառակ — աչքի անցրէք մեր ժամանակի ջղային հիւանդներին, մելանխոլիկներին. դրանց ահագին տոկոսը մշտական սւ տոկուն աշխատանք չունեցողներն են, որոնք անգործութիւնից ձանձրանում ու հիւանդանում են:

Եթէ ձեր տրամագրութիւնը փատ է, աշխատեցէք և նա կը լաւանայ. եթէ դուք յաճախ տխրել գիտէք, աշխատեցէք և թախիծը կը հեռանայ ձեզնից: Աշխատանքը փոփոխեցէք այնպէս, որ մինը միւսի հանդիստը դառնայ: Ով աշխատում է, նա միշտ ուրախ է. իսկ ով ուրախ է, նա առողջ է, առողջ ֆիզիքապէս և հոգեպէս:

Հին իմաստուն առածներից մինն ասում է. «Ծուլութիւնը չարիքների մայրն է», իսկ մի ուրիշը թէ՛ «Աշխա-

տանքն առաքինութիւնների հայրն է: Մտէք քաղաքակիրթ պետութիւնների բանտերն ու արսուրավայրերը, հետաքրքրուեցէք այդտեղ տանջող դժբաղդների յանցանքներով և դուք կը համոզուէք, որ այդ թշուառների մեծ մասը անդործութիւնից է ոճրագործ դարձել: Անդործ մարդը, որ տանից դուրս է գալիս ձեռքերը գրպանում ու չդիտէ, ինչ անէ, մօլութիւնների վայրերի ու գինեւանների ճանապարհը շուտ կը գտնի. տուն էլ կը վերադառնայ ծանրացած գլխով ու խղճով, գաղաղած, տրամադիր չարագործութեան: Այն ինչ՝ ամբողջ օրն աշխատանք ու քրտինք թափողը երեկոյեան մի առանձին հաճոյքով կշտապի տուն՝ տեսնելու և գրկելու իր սիրելիներին, հանդիսի տալու իր խոնջացած մարմնին և փառաբանելու իր Արարչին:

Աշխատանքն ուրախութիւն և առողջութիւն է պարգևում մարդուն, նրա հոգին անհուն գոհունակութեան, վեհանձնութեան, հերոսութեան ու քնքոյշ զգալմունքների աղբիւր է դարձնում: Նա ընտանիքի երջանկութեան ու աղգի մեծութեան գլխաւոր պայմանն է: Թշուառ ու արհամարհելի է այն մարդը, որ աշխատելուց փախչելով, հրաժարւում է ընտանիքից: Մեծ ու բաղդաւոր են այն ազգերը, որոնք աշխատող ընտանիքներ շատ ունեն:

Աշխատանքը մարդու մէջ սէր է զարթեցնում գէպի հայրենիքն ու մարդկութիւնը, գէպի այն ամենն, ինչ որ մարդ իր և իր նախորդների ջանքերով է ձեռք բերել, կերտել ու պահպանել:

Ինչ որ գեղեցիկ է, մեծ ու օգտակար, թղթում է աշխատանքից: Պարզ է ուրեմն, որ՝

Աշխատանքն աստուածային օրհնութիւն է:

Յ. ԲՆ. Սարիկեանց

